



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ ՉԱՐԵԹԻ ՈՒ ՉԱՆԳԱԿԱՏՈՒՆԵՐՈՒ ԽԱԶԵՐՈՒՆ ՕԾՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԽԱԶԵՐՈՒ ՕԾՈՒՄ

Կիրակի, Յուլիտեմբեր 5, 2008 թուականը Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ տարեգրութեան մէջ պատմական օր մը եղաւ եւ ոսկեայ տառերով արձանագրուեցաւ:

Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցեց, օրուան յատուկ պատգամը փոխանցեց եւ աւարտին՝ եկեղեցւոյ զմբէթի ու զանգակատուներու խաչերուն օծումը կատարեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան:

Ս. Խորանին կը սպասարկէին Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի զոյգ վարիչներ՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, ինչպէս նաեւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պապօշեան:

Առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ, եկեղեցւոյ Յովիւր, Յոգաբարձութիւնը, Տիկնանց Միութեան անդամները, Երեսփոխանական կազմի եւ յարակից մարմիններու ներկայացուցիչները մեծ խանդավառութեամբ պարտականութեան վրայ էին ու ակնդետ կը սպասէին Առաջնորդ Սրբազան Յօր ժամանման: Իսկ հաւատացեալները խուռներամ կը ժամանէին եկեղեցի. անոնց դեմքին վրայ զգալի էր երջանկութիւնը:

Ժամը 10:30-ին սկսաւ Ս. Պատարագի թափօրը, մինչ եկեղեցւոյ Դպրաց Դասը, ղեկավարութեամբ Յարութիւն Սրկ. Մաթոսեանի, կ'երգէր «Յրաշափառ» շարականը: Խորանին վրայ կը ծառայէին սարկաւազները՝ բուրվառ ու քշոց ընելով, իսկ Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտները՝ մոմակրութիւն ու խաչվառ բռնելով:

«Յայր Մեր»էն առաջ, Սրբազան Յայրը տուաւ իր հայրական հոգեշունչ պատգամը: Ան նախ շնորհաւորեց ու գնահատեց եկեղեցւոյ Յոգեւոր Յովիւն ու Յոգաբարձութիւնը, Երեսփոխանական կազմն ու շինարարական յանձնախումբը, Տիկնանց Միութիւնն ու Օժանդակ Մարմինը, որոնք մեծ բժախնդրութեամբ հետեւած էին ու աւարտին հասցուցած՝ եկեղեցւոյ շինարարական աշխատանքի վերջին հանգրուանը՝

Եկեղեցւոյ գմբեթի, զոյգ զանգակատուններու եւ եկեղեցւոյ մայր դուռին ու յառաջամասին շինարարութիւնը:

Ան փառք տուաւ Աստուծոյ, որ այսօր Ս. Սարգիս Յայց. Առաք. եկեղեցւոյ շինարարական աշխատանքները, գմբեթի շինարարութեան հետ գմբեթացան, իրենց լրումին հասան: Ան նաեւ շեշտեց, որ հիմա, երբ նիւթական եկեղեցին ամբողջացաւ, պէտք է նաեւ հոգեւոր եկեղեցին առաւել եւս պայծառանայ: Անդրադառնալով խաչերու օծման, Սրբազանը ըսաւ՝ թէ Զրիստոսի Ս. Խաչի նշանը զետեղելով եկեղեցւոյ գմբեթին ու զանգակատուններու վրայ, աղօթք կը բարձրացնենք ու կը խնդրենք մեր Փրկիչէն, որ Իր Ս. Խաչին հովանիին ու պահպանութեան տակ պահէ այս Ս. եկեղեցին եւ մեր ժողովուրդի իւրաքանչիւրին տունն ու ընտանիքը, փրկելով մեզ բոլոր երեւելի եւ աներեւոյթ թշնամիներէն:

Պատարագի աւարտին կատարուեցաւ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն, հոգիներուն համար՝ մեզմէ առ յաւետ բաժնուած եկեղեցւոյ անդրանիկ Յոգեւոր Յովիւ՝ վախճանեալ Տ. Սարգիս Զինյ. Անդրեասեանի, ննջած Յոգաբարձական, Տիկնանց Միութեան անդամներու, որոնք գործեցին ու անցան:

Ապա, եկեղեցւոյ մայր դրան առջեւ, ի ներկայութեան հաւատացեալներու հոծ բազմութեան, Առաջնորդ Սրբազան Յայրը, շրջապատուած հոգեւորականաց, սարկաւազաց ու դպրաց դասերով, օծումը կատարեց գմբեթի ու զանգակատան խաչերուն: Արարողութեան սկիզբը, սաղմոսներու փոխասացութեամբ, հոգեւոր հայրերը գինիով լուացին ու ջուրով սրբեցին խաչերը: Ապա, Առաջնորդ Սրբազան Յայրը, «Առաքելոյ Աղանոյ» շարականին երգեցողութեամբ, Միւռնաթափ աղանին ի ձեռին՝ Ս. Միւռնը հեղուց սրուակին մէջ եւ օծեց խաչերը:

Օծման աւարտին, Սրբազան Յայրը շնորհաւորեց ու բարձր գնահատեց բարերարներուն նուիրածութիւնը Ս. Սարգիս եկեղեցւոյ հանդէպ, յատկապէս յիշելով եկեղեցւոյ գլխաւոր բարերար՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Սիւզան Կիտցիսեանները, որոնք գմբեթի խաչի կնքահայրութիւնը ստանձնած էին, իսկ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Նունէ Սեփեթեաններն ու Տէր եւ Տիկին Կարօ եւ Մարալ Ղազարեանները՝ որոնք զանգակատուններու խաչերու օծման կնքահայրութիւնը ստանձնած էին:

Պահը շատ յուզիչ ու խորհրդաւոր էր, երբ յատուկ վերելակով մեծ խաչը կը բարձրացուէր ու կը զետեղուէր գմբեթին գագաթը, մինչ դպիրները կ'երգէին Յակոբոս տեառնեղբօր երգած «Խաչի քո Զրիստոս երկիրպագանեմ» աղօթք-շարականը: Երկարատեւ ծափողջոյններ, զանգակներու դողանջ... հաւատացեալներու աչքերէն երջանկութեան արցունքներ կը հոսէին, ի տես իրենց աւելի քան 23 տարիներու երազի իրականացման: Նոյն խանդավառութեամբ զետեղուեցան զանգակատուններու խաչերը, իսկ Դպրաց Դասը շարունակեց երգել «Սուրբ Աստուա»ը, «Զօրութիւն Ս. Խաչի քո Զրիստոս»ը եւ այլ շարականներ, որոնք բոլորն ալ Ս. Խաչին փառքն ու զօրութիւնը կը հիւսէին:

Արարողութեան աւարտին երգչախումբն ու ներկայ բազմութիւնը մեծ խանդավառութեամբ երգեցին «Կիլիկիա»ն եւ «Ի Վեհ Բարձանց»ը: Ապա, ներկաները եկեղեցւոյ շրջափակին մէջ մասնակցեցան Յոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան կողմէ պատրաստուած հիւրասիրութեան:

ՃԱՇԿԵՐՈՅԹ

Նոյն օրը, երեկոյեան ժամը 6-ին, Փասատինայի Հայ Կեդրոնին մէջ, աւելի քան 350 հոյորդիներ եւ բարերարներ մեծ խանդավառութեամբ տօնախմբեցին եկեղեցւոյ շինարարական աշխատանքի վերջին հանգրուանին աւարտի սիրոյ ճաշը: Ծաշկերոյթին հանդիսավարութիւնը կատարեց Հոգաբարձութեան փոխ-ատենապետուհի՝ Տիկ. Թերեզ Զեմանճեան: Խօսք առին Հոգաբարձութեան ատենապետ Տիար Յակոբ Ետալեան՝ հայերէն լեզուով, իսկ Հոգաբարձութեան անդամ Տիար Վաչէ Սայեղ՝ անգլերէն լեզուով: Գործադրուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր, եւ կատարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ: Ծաշկերոյթի ընթացքին Հովին ու Հոգաբարձութիւնը յատուկ յուշանուէրներ յանձնեցին եկեղեցւոյ շինարարական աշխատանքի յանձնախումբի անդամները:

Փակման ու օրհնութեան խօսքը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ անգամ մը եւս շնորհաւորեց Ս. Սարգիս եկեղեցւոյ մեծ ընտանիքը, անցեալի ու ներկայի բոլոր մշակներն ու ծառայողները, բարերարներն ու ժողովուրդը, այս մեծ իրագործումին համար:

Ծաշկերոյթը վերջ գտաւ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով եւ «Կիլիկիա» մաղթերգով:

Խորէն Զիւյ. Պապօշեան

PRELATE CONSECRATES DOME AND BELL TOWER CROSSES AT ST. SARKIS CHURCH

On Sunday, October 5th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at St. Sarkis Church in Pasadena. At the conclusion of Divine Liturgy, the Prelate conducted the consecration and placement of the dome and bell tower Crosses. The Prelate was assisted at the altar by Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, and parish priest Rev. Fr. Khoren Babochian.

The Prelate began his sermon by thanking God for the historic day, then congratulated and commended the Pastor, Board of Trustees, Delegates, Ladies Auxiliary, and building committee members for their diligence throughout the construction phase and their commitment to seeing the project through. The Prelate addressed the faithful saying though the physical construction of the church is complete, that it is imperative that they maintain and strengthen their ties with the church and have a more active involvement in the endeavors of their parish community. He concluded by praying to God for His “holy and venerable cross to deliver us all from enemies both visible and invisible”.

At the conclusion of services the Prelate was led in a procession to the main entrance where the crosses were laid out. The Reverend Fathers applied wine and water to the crosses, after which the Prelate began the consecration

with Holy Muron. Hundreds of faithful including main church sponsors Mr. and Mrs. Sarkis and Suzan Kitsinian, and bell tower sponsors Mr. and Mrs. Sarkis and Nouné Sepetjian and Mr. and Mrs. Garo and Maral Ghazarian. Following the consecration, the crosses were ceremoniously placed atop the dome and bell tower. At the conclusion of the service, the faithful were invited for a reception organized by the Ladies Auxiliary.

Later in the evening, over 350 guests attended the annual banquet of the church at the Pasadena Armenian Center to celebrate this latest accomplishment of the parish. During the banquet, the Pastor and Board of Trustees commended the members of the building committee by presenting them with mementos. Remarks were offered by Board of Trustees and an artistic program also took place. The banquet came to a close with the Prelate's remarks and benediction.